Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի
10 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ; ե-սխալ; զ-ճիշտ; է-ճիշտ; ը-սխալ (յուր.՝ **0.25միավոր**)

2. Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն (**1միավոր**): Ընդունել նաև Զաիր պատասխանը: Պարզապես Կոնգո պատասխանի դեպքում՝ **0.5միավոր**:

3. դ. **1միավոր**

4. ա. Կանաչ հեղափոխություն/կանաչ երկրորդ հեղափոխություն (**1միավոր**):
բ. Եգիպտացորենը չորային կլիմային առավել դիմացկուն հացահատիկներից է և հետևաբար կլիմայի փոփոխության պայմաններում ավելի արդյունավետ մշակաբույս (**0.5միավոր**): Բացի այդ եգիպտացորենը ոչ միայն պարենային մշակաբույս է, այլև կենսավառելիքի արտադրության հումք/տեխնիկական մշակաբույս (**0.5միավոր**):
գ. Արգենտինա (**0.5միավոր**):
դ. Հնդկաստան (**0.5միավոր**):

5. ա. Քանի որ քարտեզի մասշտաբն է 1սմ-200կմ, հետևաբար 1սմ^2 – 40000կմ^2 է, իսկ օբյեկտը քարտեզում կզբաղեցնի 10000000կմ^2/40000կմ^2 = 250սմ^2 (**1միավոր**): Հաշվարկի ընթացքում հաշվարկային սխալ թույլ տալու դեպքում առավելագույնը **0.5միավոր**:
բ. Քանի որ տրված է գոտիական ժամանակը, արլ. ե. 41^0 տեղականը գտնելու համար այդ ժամային գոտու կենտրոնական միջօրեականի նկատմամբ հեռավորություն կարելի է որոշել՝
45-41= 4^0
Հետևաբար տեղական ժամանակը արլ. ե. 41^0 կլինի 16:16-4*4րոպե = **16:00** (միայն տեղական ժամանակը գտնելու դեպքում՝ **0.5միավոր**)
Տեղական ժամանակը Լոնդոնում = 16:00-41*4րոպե= 14:16 (**0.5միավոր**)
Այլ ճանապարհով լուծումները քննել անհատական կարգով:

6. Ճիշտ համարել նշված տարբերակներից ցանկացած չորսը՝ **սողանք, ցեխահոսք, սոլիֆլուկցիա, ձնահյուս, քարաթափվածք, սելավ**: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ **0.25միավոր**: Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել **0.25**-ով:

7. **ա.** Նորվեգական, Բարենցի, Կարայի, Ռոսսի
բ. Ֆրանսիա, Հնդկաստան, Իրան, ՌԴ
Յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում - **0.25միավոր:**

8. ա. Քանի որ լեռնային տարածքներում գործում է վերընթաց գոտիականության օրենքը և ըստ բարձրության մակերեսները կրճատվում են, հետևաբար կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում բազմաթիվ էկոհամակարգեր ուղղահայաց տեղաշարժ են կատարելու դեպի վեր և դրանց մակերեսները զգալիորեն կրճատվելու են: Իսկ որքան փոքր է էկոհամակարգը, այնքան ցածր է դրա դիմադրողականությունը արտաքին ազդակներին: Բովանդակորեն ճիշտ պատասխաններին՝ **1 միավոր**:

բ. Սևանա լճից հյուսիս-արևմուտք սկիզբ են առնում Գեղամա հրաբխային ծագման լեռները, որոնց ապարների մեծ ծակոտկենությունը հանգեցնում է թափվող տեղումների ինտենսիվ ներծծմանը և մակերևութային հոսքի ձևավորման անբավարար պայմանների: Լիարժեք պատասխանը՝ **1միավոր**

9. ա. Ա՝ 0.075կմ^3 կամ 75000մ^3 կամ 75մլն լ (որևէ մեկը ստանալու դեպքում՝ **0.5միավոր**)
Բ՝ 0.15 կմ^3 կամ 150000մ^3 կամ 150մլն լ (որևէ մեկը ստանալու դեպքում՝ **0.5միավոր**)

բ. Ա գետի ծախսը կտրուկ ավելանում է, ապա կտրուկ նվազում, ինչը կարող է պայմանավորված լինել ավազանում հոծ ապարների լայն տարածվածությամբ, սակավ բուսականությամբ և լանջային զգալի թեքություններով, որոնց պայմաններում թափված տեղումները հիմնականում մակերևութային հոսք են ստանալու և արագ հասնելու գետ (ցանկացած երկու հիմնավորման դեպքում **0.5միավոր**): Բ ավազանում ակնհայտորեն հակառակ պատկերն է՝ հիմնականում ջրաթափանց ապարներ են և թափված տեղումների մեծ մասն արագ ներծծվում է և դանդաղ տեղափոխվում դեպի գետ կամ բուսականությունը առատ է և կլանում է զգալի քանակի ջուր՝ խոչընդոտելով արագ հոսքին: Ավազանը նաև հավանաբար չունի լանջային մեծ թեքություններ և ջուրը չի կարող արագ հասնել գետի հուն (ցանկացած երկու հիմնավորման դեպքում **0.5միավոր**):

10. ա. Բևեռային ցերեկն այն երևույթն է, երբ արևն առնվազն 24 ժամ մայր չի մտնում, մինչդեռ սպիտակ գիշերների պարագայում արևը մայր է մտնում, սակայն նրա ցրված լույսը գիշերը դարձնում է բավական լուսավոր **(0.5միավոր)**: Իմաստային ճիշտ պատասխանների դեպքում շնորհել լիարժեք միավոր:

բ. Բևեռային ցերեկները դիտարկվում են միայն 66,5^0-90^0 աշխարհագրական լայնությունների միջակայքում **(0.5միավոր)**: Թվային որևէ թերության դեպքում միավոր չի տրվում, իսկ բևեռամերձ լայնություններում ձևակերպումը չի ընդունվում:

գ. Մարտի 22-ից սեպտեմբերի 22 **(0.5միավոր)**: Մարտի 21-Սեպտեմբերի 23 պատասխանի դեպքում՝ **0 միավոր,** քանի որ մարտի 21 –ին և սեպտեմբերի 23-ին գիշերահավասար է, հետևաբար 12ժամ գիշեր է ամենուրեք:

դ. Հյուսիսային **(0.5միավոր)**:

11. Տոհոկու-երկրաշարժ/ցունամի- 3
Նարգիզ-ցիկլոն- 4
Միչուան-երկրաշարժ- 1
Նյոս-լճաբանական աղետ- 2

Յուրաքանչյուր ճիշտ եռյակի համար **0.5միավոր**, իսկ յուրաքանչյուր ճիշտ զույգի համար՝ **0.25միավոր**